

11774



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«25» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 229 - 24

Նախաձեռնող՝

«Գազոնե» ՍՊԸ
ք. Գյումրի, Մովսես Խորենացի 54

Գործունեությունը՝

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 189 հասցեում
հեղուկ վառելիքի /գազ/ լիցքավորման կայանի կառուցում
Շիրակի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 229 - 24

25» հոկտեմբերի 2024թ.

Շիրակի մարզի ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում հեղուկ վառելիքի /գազ/ լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Գազոնե» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Գյումրի համայնք, Գյումրի բնակավայր

Ներածական մաս. «Գազոնե» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում կառուցել հեղուկ վառելիքի /գազ/ լիցքավորման կայան (այսուհետ՝ ԳԼ կայան):

Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք են հանդիսացել N15102019-08-0026 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը և Գյումրի համայնքի կողմից 03.05.2023թ. տրամադրված N91 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի բ. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Շիրակի մարզում, տեղամասի ռելիեֆը սարահարթային է, բացարձակ բարձրության նիշերը տատանվում են 1500-1700 մ սահմաններում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող ԳԼ կայանը բաղկացած կլինի օպերատորային շինությունից, մղող պոմպի համակարգից, ստորգետնյա 1 գազամբարից ($V = 20.0 \text{ M}^3$), ստորգետնյա 1 վթարային գազամբարից (20.0 M^3), ավտոմեքենաների գազալցակետից, շանթարգելներից և հակահրդեհային վահանակներից:

Օպերատորային շինությունը կլինի 8.4 մx5.4 մ չափերով մեկ հարկանի սենյակ, որտեղ ներառված կլինի տնօրենի սենյակը, հանգստի սենյակը, պահեստը և սանհանգուցնիցը:



Տարածքում նախատեսվում է 3 մx5 մ չափերով բետոնապատ շերտով հարթակ՝ մեքենայի լիցքավորման համար:

Նախատեսվում է ստորգետնյա գազամբարի տեղադրում՝ 20.0 մ³ ծավալով, ստորգետնյա /վթարային/ գազամբարի տեղադրում՝ 20.0 մ³ ծավալով, հեղուկ գազի լցասյունակ՝ երկու ճկախողովակով:

Հողային աշխատանքները կիրականացվեն համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները: Խրամուղու հետլիցքը պետք է կատարվի հետևյալ հերթականությամբ՝ սկզբում կատարաստվի ավագե հիմք՝ 0.1 մ հաստությամբ, որից հետո 10-15 սմ շերտով ձեռքով կկատարվի հավելում, մինչև 0.2 մ խողովակի մակերեսից վերտոփանումով: Հետագա լիցքը կիրականացվի մեխանիզմով:

Գազատարի ամբողջ երկայնքով կանցկացվի ազդանշանային ժապավեն /դեղին գույնի/ ոչ պակաս 0.2 մ լայնությամբ, գազատարի վերևի նիշից՝ 0.2 մ բարձրությամբ: Այն հատվածներում, որտեղ գազատարը կհատվի մյուս կոմունիկացիաների հետ, զգուշացնող ազդանշանային ժապավենը պետք է տեղադրել կրկնակի, իրարից 0.2 մ հեռավորության վրա, հատման մասից 2 մ հեռավորության վրա յուրաքանչյուր կողմից:

ԳԼ կայանի շանթապաշտպանությունը նախատեսվում է իրականացնել մեկ շանթարգելով: Ընդունված է 25 մ բարձրությամբ շանթարգել, կառուցված տարբեր տրամաչափի մետաղական խողովակներից:

Նախատեսվում է կառուցել հողանցման օջախ: Որպես հորիզոնական հողանցիչ, նախատեսվում է 40x4 տիպի շերտապողպատ, իսկ ուղղահայաց հողանցիչ 2.5 մ երկարությամբ 50x50x5 մմ չափի անկյունակ, որոնց թիվը կարող է փոփոխվել կախված հողանցման կոնտուրի չափումների արդյունքներից: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է ավելացնել ուղղահայաց հողանցիչների թիվը, ապահովելով հողանցման նորմատիվային թույլատրելի դիմադրությունը:

Նախատեսվող գործունեության տարածքը անհրաժեշտ է ցանկապատել, որը պետք է լինի չիրկիզվող նյութերից և ապահովի տարածքի օդափոխությունը: ԳԼ կայանի տարածքը պետք է ունենա համապատասխան լուսավորում, պետք է լինի մաքուր, անցուղիները և անցումները պետք է լինեն ազատ: Արգելվում է ԳԼ կայանի արտադրական գործընթացներին ոչ պիտանի նյութերի պահեստավորումը և պահպանումը: Ստորգետնյա ռեզերվուարներ են համարվում այն ռեզերվուարները, որոնց վերին եզրը գտնվում է հարակից տարածքի նախագծային նշագծից առնվազն 0.2 մ ցածր: Ստորգետնյա ռեզերվուարներին են հավասարվում այն արտաքին ռեզերվուարները, որոնք լցաձածկվում են գրունտով վերին եզրից հաշված առնվազն 0.2 մ բարձրության վրա, իսկ լայնությամբ՝ ռեզերվուարի պատից հաշվելով 6 մ հեռավորության վրա: Արտաքին ռեզերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեզերվուարի տրամագծից ոչ պակաս, իսկ եթե դրանց տրամագիծը 2 մ-ից պակաս է, ապա առնվազն 2 մ:

Ստորգետնյա ռեզերվուարների անջատող սարքավորումները, ապահովիչ կափույրները և հսկիչ-չափիչ սարքերը պետք է գտնվեն գետնի /լցաձածկի/ մակերեսից բարձր: Ստորգետնյա և վերգետնյա հեղուկ գազերի ռեզերվուարները պետք է սարքավորվեն հեղուկի մակարդակի ցուցիչներով, մանոմետրերով և ապահովիչ կափույրներով: Բացի այդ, վերգետնյա ռեզերվուարները պետք է սարքավորվեն նաև չսառչող ճնշակարգավորիչ կափույրով: Ռեզերվուարի վրա պետք է տեղադրվեն առնվազն երկու ճնշաթափման ապահովիչ կափույրներ: Դրանցից առաջ պետք է տեղադրված լինի հատուկ եռաքայլ ծորակ, որը թույլ կտա անջատել երկու կափույրներից որևէ մեկը:

Ջեռուցող սարքավորումներ թույլատրվում է տեղադրել ինչպես ռեզերվուարների ներսում, այնպես էլ դրսից, այն պայմանով, որ դա չառաջացնի ռեզերվուարի ներքին ճնշման հաշվարկային ցուցանիշներից բարձր աճ: Արևի ճառագայթումից վերգետնյա



- ռեզերվուարների տաքացումը բացառելու համար դրանք ներկվելու են բաց գույնի ներկով /անհրաժեշտության դեպքում, բայց ոչ պակաս 5 տարին մեկ անգամ/ կամ սարքավորվելու են ջերմային պատյանով, կամ տեղադրվելու են չիրկիզվող նյութերից պատրաստած ծածկարանների տակ: Ստորգետնյա ռեզերվուարները պետք է պաշտպանված լինեն կոռոզիայից՝ համաձայն սահմանված նորմերի պահանջների: Արգելվում է ԳԼ կայանների տարածքով օդային էլեկտրահաղորդակցման գծերի անցկացումը: Պահպանման բազայի տարածքի սահմաններում մալուխային գծեր թույլատրվում է անցկացնել միայն դեպի հսկիչ-չափիչ սարքերը և ավտոմատ սարքավորումները, որոնք անհրաժեշտ են ռեզերվուարի շահագործման համար:

Պոմպերտորի սարքավորումների բոլոր այն մետաղյա մասերը, որոնք աշխատանքի ժամանակ կարող են հայտնվել լարման տակ /հենցը, էլեկտաշարժիչների կորպուսները/հենամարմինները, պահարանները, կառավարման վահանակները և այլն/ պետք է լինեն հողակցված: Բոլոր փոկային փոխանցումների մեկուսացումը պետք է տեղադրել փոկերից առնվազն 20 սմ հեռավորության վրա: Լիցքավորման բաժանմունքի դասավորումը/կազմավորումը պետք է բացառի բալոններին՝ լիցքավորման կայանին ավտոմոբիլային տրանսպորտի 5 մ-ից ավելի մոտենալու հնարավորությունը: ԳԼ կայանների բոլոր փակ պայթյունավտանգ սենքերը պետք է սարքավորված լինեն մեխանիկական օդափոխման համակարգով, որը կապահովի աշխատանքի ժամանակ 1 ժամվա ընթացքում առնվազն տարածքի ընդհանուր ծավալի տասնապատիկ օդափոխում, իսկ ոչ աշխատանքային ժամերին 1 ժամվա ընթացքում՝ եռապատիկ օդափոխում: Ոչ աշխատանքային ժամերին իրականացվող օդափոխումը կարող է լինել մեխանիկական, բնական կամ խառը: Ճնշիչ պոմպակայանը պետք է ունենա նաև վթարային օդափոխման համակարգ:

Հեղուկ գազերի գազատարները պետք է ներկվեն պայմանական գույների յուղաներկով. գազային գազատարերը՝ դեղին գույնի լայնական կարմիր օղակներով, հեղուկ գազի գազատարերը՝ շագանակագույն, լայնական կարմիր օղակներով: Հեղուկ գազի վերգետնյա արտաքին գազատարերը պետք է ներկվեն արևի ճառագայթները անդրադարձնող բաց գույնի ներկերով առանձին հատվածների ազդանշանային ներկվածքով՝ ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան:

Ռետինագործվածքային խողովակներն արգելվում է օգտագործել որպես մնայուն գազատարեր:

Լցակայանի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շահագործման փուլում կայանում առաջացող կենցաղային կեղտաջրերը կհեռացվեն ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, որտեղից էլ կեղտաջրերի անջրթափանց հոր՝ 45 խմ ծավալով, իսկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

- Տեխնիկատնտեսական ցուցանիշներ են՝
- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 0,15 հա,
- կառուցապատման մակերեսը՝ 164.0 քմ,
- կանաչապատման մակերեսը՝ 908 քմ,
- բարեկարգումը՝ 428 քմ:



Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 1200 խմ, որից հետլիցքը՝ 300 խմ: Ավելցուկ 900 խմ հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, այնուհետև կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 908 քմ, նախատեսվում է սիզախոտ և թփեր: Տարածքի ոռոգման համար նախատեսվում է կազմակերպել ցնցուղային ոռոգման ցանց: Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 300 մ³ հողաբուսաշերտի ձեռքբերումը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն փոշու արտանետումների հետ՝ հիմքերի փորման ընթացքում, դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքի բարեկարգում և մաքրում շինադբից:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ շինարարական աղբը, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) և փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ: Շինարարական և կենցաղային աղբը, մնացորդային գրունտը ամբողջությամբ կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործումը տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

ԳԼ կայանի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 1320000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով, Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Շիրակի մարզպետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հաշվետվության մեջ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Անհրաժեշտ է ապահովել հաշվետվության մեջ նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը և կանաչ տարածքների խնամքը:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:



- ▶ 4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, զեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Գագոնե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի ք. Գյումրի Երևանյան խճուղի 189 հասցեում հեղուկ վառելիքի /գազ/ լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Էրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան